

Պետություն-մասնավոր գործընկերության ինստիտուտը որպես պետության մասնակցությամբ պարտավորական իրավահարաբերությունների տարատեսակ

ՀՏԴ 347

Հակոբջանյան Արման Վ.

ասպիրանտ, Երևանի Պետական Համալսարան, Իրավագիտության ֆակուլտետ «Վարդանյան և գործընկերներ» ՍՊԸ, իրավաբան, (Երևան, ՀՀ) arman.hakobjanyan20@gmail.com

Հանգուցաբառեր՝ պետություն-մասնավոր գործընկերություն, պետություն-մասնավոր համագործակցության հայեցակարգ, հանրային ծառայություններ, հանրային գործընկեր, պետական աջակցություն, քաղաքացիական շրջանառություն:

Институт государственно-частного партнерства как разновидность обязательных правоотношений с участием государства

Акобджанян Арман В.

аспирант, Ереванский Государственный Университет, Юридический факультет "Варданян и партнеры" ООО, юрист (Ереван, РА) arman.hakobjanyan20@gmail.com

Аннотация. В рамках данной работы представлены риски, возникающие при реализации института государственно-частного партнерства, международный опыт, связанный с их регулированием, а также недостатки законодательства, регулирующего исследуемые отношения, в практике его применения, и намечены способы их устранения.

Ключевые слова. государственно-частное партнерство, концепция государственно-частного партнерства, государственные услуги, государственный партнер, государственная поддержка, гражданский оборот.

The Institution of Public-Private Partnership as a Kind of Obligatory Legal Relations With the Participation of the State

Hakobjanyan Arman V.

PhD student, Yerevan State University, Faculty of Law "Vardanyan & Partners" LLC, Lawyer (Yerevan, RA) arman.hakobjanyan20@gmail.com

Abstract. Within the framework of this work are presented the risks arising during the implementation of the public-private partnership institute, the international experience related to their regulation, as well as the shortcomings in the legislation regulating the studied relations, in the practice of its application, and are outlined the ways of their elimination.

Key words. public-private partnership, public-private partnership concept, public services, public partner, state support, civil turnover.

Նախաբան. Սոցիալ-քաղաքական ներկայիս իրավիճակում պետությունը կարևոր տեղ է զբաղեցնում տնտեսության կարգավորման գործընթացում: Այդ գործընթացում պետությունը հանդես է գալիս ոչ միայն որպես այդ հարաբերությունները կանոնակարգող սուբյեկտ, այլ նաև այդ հարաբերությունների անմիջական մասնակից, ըստ այդմ ձեռք է բերում քաղաքացիական իրավահարաբերությունների առանձնահատուկ սուբյեկտի կարգավիճակ: Տնտեսության որոշ ճյուղերի զարգացման, աջակցության նպատակով աշխարհի շատ երկրներում ընդունված մոտեցում է դրանք

պետական միջոցներով իրականացնելը, դրանով իսկ զարկ տալով տնտեսության այդ ճյուղին, որը հետագայում արդեն դինամիկ զարգացման կենթարկվի ինտեգրացիայի ուժով: Նույն կերպ, Հայաստանի Հանրապետությունում հայտարարված «տնտեսական հեղափոխության» շրջանակներում դիտարկելով տնտեսության զարգացման հեռանկարները, անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ տնտեսության որոշ ճյուղեր պահանջելու են պետության մասնակցությունը:

Սույն աշխատանքի շրջանակներում ուսումնասիրության են ենթարկվել տարբեր

տեսական աղբյուրներ՝ ինչպես հայաստանյան, այնպես էլ արտասահմանյան գրականություն, վերլուծվել են ՀՀ Զաղաքացիական օրենսգիրքը, «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքը:

Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել պետություն-մասնավոր գործընկերության հարաբերությունները կանոնակարգող ՀՀ օրենսդրության կիրառման պրակտիկայում տեղ գտած թերությունները, և նախանշել դրանց վերացման ուղիները:

Բովանդակություն

Պետություն-մասնավոր գործընկերությունը (այսուհետ՝ ՊՄԳ) պետության և մասնավոր սեկտորի միջև գործակցության ձևաչափ է, որը թույլ է տալիս մասնավոր ընկերություններին պետական աջակցությամբ իրականացնել հանրային նշանակություն ունեցող նախագծեր, դրանք շահագործել ու կառավարել:

ՊՄԳ իրականացման ընթացքում ծագող ռիսկերը. Միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՊՄԳ-ների իրականացման ընթացքում առավել տարածված են հետևյալ ռիսկերը՝

1) ՊՄԳ նախագծի մասնակիցների միջև ծախքերի և եկամուտների անհամապատասխան բաշխում, օրինակ՝ որոշակ օբյեկտի կառուցման ծախսերի կամ գուտ եկամտի ոչ ճիշտ բաշխումը:

Որպես օրինակ կարող է ծառայել Սանկտ Պետերբուրգի Օռլովի թունելի կառուցման ծրագիրը, երբ Սանկտ Պետերբուրգի իշխանությունները 2012 թվականի դեկտեմբերին մասնավոր գործընկերոջը հայտնեցին կոնցեսիայի պայմանագրի վաղաժամկետ դադարման մասին, որի պատճառը կոնցեսիոնների կողմից ֆինանսական ծախսերը հաստատող փաստաթղթերը թաքցնելն էր, ինչի հետևանքով նախապես հաշվարկված ծախսերն ավելացել էին 30 տոկոսով [1]: Իսկ Մեծ Բրիտանիայում Պադինգտոնի հիվանդանոցի կառուցումը, որը պետք է արժենար 300 միլիոն ֆունտ ստեռլինգ, իրականում արժեցավ 894 միլիոն ֆունտ ստեռլինգ [2, էջ 5]:

2) Նախագծման տեխնիկական սխալներ, մասնավորապես՝ ռիսկեր, որոնք կապված են նախագծային փաստաթղթերի սխալ կազմման հետ, տեխնոլոգիական կարգավորման հետ կապված ռիսկեր, տարածքի հետ կապված խնդիրներ, ինչպես նաև օբյեկտը շահագործման հանձնելուց հետո թերություններ հայտնաբերելու ռիսկեր. օրինակ՝ Մեծ Բրիտանիայում Հարտֆորդի հիվանդանոցը, որը 18 ամսվա ընթացքում երեք անգամ հեղեղվել էր ջրով, այդ թվում երկու անգամ կեղտոտ ջրով, ինչը հետևանք էր նախագծման ընթացքում թույլ տրված սխալների [3]:

3) Ռիսկերի ոչ արդարացի բաշխում ՊՄԳ գործընկերների միջև. սա վերաբերում է գործընկերոջ համար ոչ ձեռնտու պայմաններին, ինչը կարող է դրսևորվել, օրինակ՝ նախագծի իրականացման ընթացքում որոշակի խախտումների համար անհամաչափ բարձր տուժանքները, նախագծի կատարման անհամաչափ սեղմ ժամկետները: Միջազգային պրակտիկայում և մասնավորապես Ռուսաստանի Դաշնությունում գրանցվել են դեպքեր, երբ մրցույթները չեն կայացվել, քանի որ ռիսկերի ոչ բարենպաստ բաշխման պատճառով հայտեր չեն եղել:

4) Սոցիալական և էկոլոգիական ռիսկեր. ՊՄԳ-ի ոլորտում էկոլոգիական ռիսկ է համարվում օբյեկտի բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, տեխնիկական անվտանգության անբավարար մակարդակը և մարդկանց առողջությանը վնաս պատճառելը: Բազմաթիվ դեպքեր են գրանցվել, երբ հասարակությունը դեմ է դուրս եկել որևէ նախագծի, որը ենթադրել է անտառահատում, անապատացում կամ շրջակա միջավայրին հասցվող այլ վնաս: Էկոլոգիական ռիսկերի գնահատումը պետք է կատարվի նախքան նախագծի կազմումը, ինչպես նաև կարևորնշանակություն ունի էկոլոգիական ռիսկերի ապահովագրումը, ինչը տարածված է միջազգային պրակտիկայում:

5) Զաղաքական ռիսկեր. հանդիսանում է դժվար կանխատեսվող ռիսկ, որը շատ հաճախ ունենում է երկարատև բացասական հետևանքներ նախագծի համար: Մեր օրերում որպես վառ օրինակ կարող է ծառայել Միացյալ Նահանգների և Ռուսաստանի Դաշնության միջև կոնֆլիկտը, որի հետևանք են բազմաթիվ փոխադարձ սանկցիաները, որոնք առաջացնում են օտարերկրյա կապիտալի դժվար հասանելիություն և հատուկ նախագծային ընկերությունների ստեղծման դժվարություններ:

6) Օրենսդրական ռիսկ. այս ռիսկի էությունը կայանում է նրանում, որ՝ կողմերը, օգտվելով օրենսդրական բացերից, կարող են չարաշահել իրենց իրավունքները կամ կողմերը կարող են սխալ մեկնաբանել կամ կիրառել ՊՄԳ հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը, իրենց միջև կնքված պայմանագրերը:

Միջազգային փորձ.

Եվրոպական Հանձնաժողովը ՊՄԳ-ն դիտարկում է որպես ավանդաբար պետության կողմից իրականացվող ծրագրերի հետ կապված որոշակի լիազորությունների, ռիսկերի և պատասխանատվության փոխանցումը մասնավոր սեկտորին:

Համաձայն ՊՄԳ ուսումնասիրությունների եվրոպական կենտրոնի (European PPP Expertise Centre) տվյալների՝ Եվրոպական Միությունում 2010 թվականի դրությամբ կնքված PPP պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմել էր 18 միլիարդ եվրո [4, էջեր 763–782]:

2016 թվականի սեպտեմբերին լույս է տեսել Եվրոպական ներդրումների բանկի ՊՄԳ հետազոտությունների Եվրոպական կենտրոնի և Եվրոստատի հեղինակած աշխատությունը՝ A Guide to the Statistical Treatment of PPPs, որի շրջանակներում քննարկվել է ՊՄԳ պրակտիկան և առավել մանրամասն՝ ՊՄԳ պրոյեկտների ստատիստիկ նախագծումը: Աշխատությունը հիմնված է դեռևս 2004 թվականին Եվրոստատի կողմից ընդունված ուղեցույցի վրա [5], European system of accounts-ի կողմից ընդունված կանոնների վրա՝ վերջին խմբագրությամբ (ESA 2010) [6]:

Եվրոպական ներդրումների բանկի ՊՄԳ հետազոտությունների Եվրոպական կենտրոնի համաձայն ՊՄԳ պայմանագիրը պետք է ուղղված լինի հստակ կանխորոշված ծրագրի իրականացմանը, օրինակ՝ շենքերի, շինությունների, հիվանդանոցների, ավտոճանապարհների, կամուրջների, երկաթուղիների շինարարությանը: Եվրոստատի բնութագրմամբ ՊՄԳ-ն կարող է ուղղված լինել նաև այլ, ոչ ավանդական ծրագրերի իրականացմանը, օրինակ՝ գոյություն ունեցող ավտոճանապարհների, երկաթուղիների խոշորացումը, վերականգնումը, նոր կայարանի կառուցումն արդեն գործող երկաթուղու, մետրոյի շրջանակներում, ջրային պատնեշների կառուցումը, լայնաշերտ ցանցերի և տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի ներդրում:

Ուշադրություն է դարձվում հատկապես ՊՄԳ պայմանագրի սուբյեկտային կազմին, մասնավորապես՝ Եվրոստատը ՊՄԳ է համարում այն պայմանագիրը, որտեղ ներգրավված է գործադիր իշխանության բարձրագույն մարմնի կազմի մեջ մտնող պետական մարմին՝ նախարարություն, դեպարտամենտ, կոմիտե: Ինչ վերաբերում է մասնավոր սեկտորը ներկայացնող սուբյեկտին, ապա առաջին հերթին այն պետք է լինի կազմակերպություն, որը չի մտնում գործադիր իշխանության բարձրագույն մարմնի կազմի մեջ: Եվրոստատի դիրքորոշումն այն է, որ հատուկ ՊՄԳ պրոյեկտի իրականացման համար ստեղծված ընկերության առկայությունը ցանկալի է:

Կանոնները պահանջում են, որ ՊՄԳ իրավահարաբերությունները ներառեն ներդրումներ կունկրեստ նույնականացվող և հատուկ ծրագրված ակտիվների մեջ: Ակնհայտ օրինակներ են շենքերը, ավտոճանապարհները, կամուրջները, երկաթուղիները: Եվրոստատի մեկնաբանմամբ ՊՄԳ պայմանագիրը կիրառելի է նաև այն դեպքերում, երբ ՊՄԳ նպատակները և եկամուտները կապված են այլ պրոյեկտների, ենթակառուցվածքների, ոչ ավանդական ծրագրերի հետ: Հետևաբար ՊՄԳ պայմանագրի առարկան սպառիչ չէ:

Երաշխիքներ. Նախագիծն իրականացնողը պետք է ունենա ամրագրված բավարար գործիքակազմ սպահովագրվելու համար առնվազն իր ներդրումների վերադարձը՝ կնքվող պայմանագրերի ժամկետ, թե վաղաժամկետ լուծման դեպքում համարժեք փոխհատուցումների կամային գործողությունների կամ միջոցառումների կատարման պարտավորությունը պետության կողմից, որը թույլ կտա աշխատեցնել նախագիծը ու ստանալ կանխատեսել օգուտ/արդյունք:

Երաշխիքները նախընտրելի է սահմանել պայմանագրերում, ինչը գործնականում է և արվում է: Պայմանագրերում ամրագրվող երաշխիքների շարքում են՝

1) Եկամտի երաշխիք, որի համաձայն պետությունն սպահովում է որոշակի օբյեկտը կունկրեստ ժամանակահատվածում շահագործելու և եկամուտ ստանալու՝ մասնավոր գործընկերոջ հնարավորությունը,

2) Ծառայության համար մինիմալ վճարի երաշխիքը, որով պետությունն սպահովում է մասնավոր գործընկերոջ կողմից մատուցվող ծառայությունների դիմաց առնվազն մինիմալ վճար գանձելու հնարավորությունը,

3) Նորմատիվ փոփոխությունների երաշխիք, որի համաձայն պետությունը սահմանում է, որ սպագայում ՊՄԳ ոլորտի նկատմամբ որդեգրած քաղաքականությունը չի փոխվի, որը կառաջացնի տվյալ ոլորտի օրենսդրական դաշտի կայունություն,

4) Դադարեցման վճարի երաշխիք, որի համաձայն պետությունը պարտավորվում է վճարել մասնավոր գործընկերոջը, երբ պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է,

5) Պարտքի սպահովման երաշխիք, որով պետությունը երաշխավոր է դառնում մասնավոր գործընկերոջ կուտակած պարտքերի համար ՊՄԳ պայմանագրի գործողության ընթացքում:

Ինչ վերաբերում է ՊՄԳ ոլորտում մասնավոր գործընկերոջ իրավունքների պաշտպանության երաշխիքներին, կարող է խնդիրը լուծվել այնպես ինչպես ՌԴ-ում, օրինակ «Պետական-մասնավոր և մունիցիպալ-մասնավոր համագործակցության մասին» ֆեդերալ օրենքի (ընդունված 13.07.2015 թ., № 224-Փ3) 15-րդ օրենքը սահմանում է, որ ՊՄԳ ծրագրի իրականացման ընթացքում երաշխավորվում է մասնավոր գործընկերոջ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, և որ մասնավոր գործընկերներն օգտվում են հավասար իրավունքներից: Մասնավոր գործընկերն իրավունք ունի ստանալ պետության անօրինական գործողության կամ անգործության հետևանքով կրած վնասների փոխհատուցում:

Հայաստանի Հանրապետությունում առկա ընթացիկ վիճակը. Օրենսգրքով սահ-

մանված պայմանագրի ազատության սկզբունքը, պետության մասնակցությունը քաղաքացիա-իրավական հարաբերություններին ընձեռում են ՊՄԳ ինստիտուտը զարգացնելու հնարավորություն:

Դեռևս 2009 թվականին ՀՀ Կառավարությունը հունվարի 29-ի նիստում հավանություն էր տվել Հայաստանի Հանրապետությունում պետություն-մասնավոր հատվածների համագործակցության հայեցակարգին: Համաձայն այդ հայեցակարգի՝ ՊՄԳ-ն մասնավոր ընկերությունների մասնակցությամբ հիմնականում ենթակառուցվածքների զարգացման և ծառայությունների մատուցման (այդ թվում պետությանը և հասարակությանը) մի եղանակ է, որը ենթակառուցվածքներ և ծառայությունների ոլորտ է ներմուծում մասնավոր հատվածի միջոցները և խթանները, բայց այնուամենայնիվ պահանջում է կառավարության ներկայությունը՝ որպես պայմանագրի կողմ և/կամ կարգավորող մարմին, քանի որ արդյունաբերության որոշ ճյուղերում մրցակցությունը սահմանափակված է, իսկ հասարակության և երկրի տնտեսական զարգացման տեսանկյունից համապատասխան օբյեկտների մատուցած ծառայություններն ունեն էական նշանակություն: Հայեցակարգը ամրագրում է, որ Կառավարության կողմից կիրականացվի ՊՄԳ ոլորտին վերաբերվող օրենսդրության վերանայում և ներդաշնակեցում, իսկ Լիազոր մարմինը պետք է մշակի ոլորտին վերաբերվող ռազմավարական, օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներին վերաբերվող փաստաթղթերը և ներկայացնի կառավարության քննարկմանը:

Բոլորովին վերջերս ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքը [7] (այսուհետ նաև ՊՄԳ օրենք):

ՊՄԳ օրենքը սահմանում է ընդհանուր դրույթները, կարգավորում է ՊՄԳ-ների նախապատրաստումը և նախաձեռնումը, մասնավոր գործընկերոջ ընտրությունը՝ մրցությային հիմունքներով կամ ուղղակի բանակցություններով, ՊՄԳ պայմանագրերը, երաշխիքներ ՊՄԳ մասնավոր գործընկերների համար, ՊՄԳ-ների իրականացումը և մշտադիտարկումը, ՊՄԳ-ների պետական աջակցության մեխանիզմները և այլ ինստիտուտներ:

ՊՄԳ օրենքի 2-րդ հոդվածով տրվել է հանրային գործընկերոջ սահմանումը, այն է՝ Հայաստանի Հանրապետությունը և (կամ) տեղական համայնքները՝ ի դեմս համապատասխան պետական կառավարման մարմինների և (կամ) տեղական ինքնակառավարման մարմինների: ՊՄԳ-ների իրականացման հետ կապված գործառույթները Հայաստանի Հանրա-

պետությունը կամ տեղական ինքնակառավարման մարմինները կարող են լիազորել այլ մարմինների և (կամ) կազմակերպությունների: Այս դրույթն է, որ հիմք է հանդիսանալու պետության համար ՊՄԳ միջոցով ևս մուտք գործել քաղաքացիական շրջանառության մեջ:

ՊՄԳ օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ ՊՄԳ ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների ոլորտները սահմանվում են Կառավարության որոշմամբ:

Գտնում ենք, որ օրենքն առնվազն պետք է սահմաներ այն ոլորտները, որտեղ կարող են իրականացվել ՊՄԳ ծրագրեր, սակայն ոչ սպառիչ ցանկով, միևնույն ժամանակ հնարավորություն ընձեռելով Կառավարությանը սահմանել լրացուցիչ ոլորտներ, որտեղ կարող են իրականացվել ՊՄԳ ծրագրեր: Այս առաջարկի հիմքում ընկած է ՊՄԳ ինստիտուտի նշանակությունը հանրային և մասնավոր հարաբերությունների տարանջատման և հավասարության համար, քանի որ օրենսդրորեն պետք է լինեն երաշխիքներ առ այն, որ պետությունը չի կարող ցանկացած ոլորտի ծրագիր իրականացնել ՊՄԳ ինստիտուտի շնորհիվ, ինչի դեպքում միգուցե արժեզրկվի ՊՄԳ ինստիտուտի նշանակությունը: Դրույթի նման սահմանումն անորոշ է, քանի որ հստակ չէ, թե արդյո՞ք ՊՄԳ իրականացման ոլորտների համար անհրաժեշտ է նախնական հաստատում, թե ՊՄԳ առաջարկն է, որ պետք է նախապես հաստատվի իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից: Այսինքն պարզ չէ, թե արդյո՞ք նախապես պետք է հաստատվեն ոլորտներ, որից հետո տվյալ ոլորտում հնարավոր կլինի իրականացնել ՊՄԳ, թե՛ գործընկերը պետք է ներկայացնի ՊՄԳ ծրագիր, որը ենթակա է նախնական հաստատման:

Համենայն դեպս այդպես էր ՊՄԳ օրենքի նախագծով [8], երբ սահմանվել էին այն ոլորտները, որտեղ կարող է իրականացվել ՊՄԳ ծրագիր, միևնույն ժամանակ հնարավորություն ընձեռելով Կառավարությանը սահմանել այլ ոլորտներ:

Մասնավորապես, գտնում ենք, որ այդպիսի ոլորտներ կարող են լինել էներգետիկայի բնագավառը, ջրային ոլորտը, ավտոմոբիլային ճանապարհներ և ավտոմոբիլային ճանապարհների արհեստական կառույցները, երկաթուղիները, մետրոյի համակարգերը, այլ հանրային տրանսպորտի ծառայությունները, օդանավակայանները, հսկիչ կշռման համակարգերը և այլ տրանսպորտային ենթակառուցվածքները, կոշտ թափոնների հավաքումը, վերամշակումը և հեռացումը, համայնքային կայանատեղիները և այլ համայնքային ծառայությունները, փոստային ենթակառուցվածքները և ծառայությունները, առողջա-

պահությունը, կրթությունը, զբոսաշրջությունը, մշակույթը և սպորտը, սոցիալական բնակարանաշինությունը, սոցիալական ձեռնարկատիրությունը և այլն: Մենք առաջարկում ենք նաև սահմանել, որ «**Հայաստանի Հանրապետության Կառավարությունը հաստատում է ՊՄԳ իրականացման այն ոլորտները, որոնք նախատեսված չեն սույն օրենքով**»:

Բացի այդ, Օրենքը չի կարգավորում, թե ՊՄԳ իրավահարաբերությունն իր բնույթով քաղաքացիաիրավական է, թե վարչական, ինչը տեսականորեն կարող է խնդիր առաջացնել որոշելու համար, թե որ դատարանի իրավասություն է պատկանելու վեճերի քննության հարցը: ՊՄԳ իրավահարաբերությունները դասվում են քաղաքացիաիրավական հարաբերությունների շարքին [9], ուստի գտնում ենք, որ Օրենքով ևս պետք է սահմանվի նման դրույթ: Հետևաբար առաջարկում ենք Նախագիծը լրացնել հետևյալ դրույթով՝ «**Սույն օրենքով կարգավորվող հարաբերությունները քաղաքացիաիրավական հարաբերություններ են: Դրանցից ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարանների կողմից, եթե կողմերը չեն ընտրել վեճերի լուծման այլ կարգ**»:

Եզրահանգում. Այսպիսով, առաջարկում ենք՝

1. «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքով սահմանել այն ոլորտները, որտեղ կարող են իրականացվել ՊՄԳ ծրագրեր, մինչև սահմանակ հնարավորություն ընձեռելով Կառավարությանը սահմանել լրացուցիչ ոլորտներ,

2. «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքը լրացնել հետևյալ դրույթով՝ «Սույն օրենքով կարգավորվող հարաբերությունները քաղաքացիաիրավական հարաբերություններ են: Դրանցից ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարանների կողմից, եթե կողմերը չեն ընտրել վեճերի լուծման այլ կարգ»:

3. «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքը լրացնել ռիսկերի գնահատմանն ուղղված հոդվածով, որի համաձայն նախքան ՊՄԳ ծրագրի հաստատումը պետք է կատարվեն հետևյալ քայլերը՝

«1) Ռիսկերի նույնականացում և տվյալ նախագծին հատուկ ռիսկերի առանձնացում,

2) Ռիսկերի գնահատումը, փոփոխությունները, դրանց վրա հասնելու պարագայում ազդեցությունը նախագծի վրա,

3) Ռիսկերի բաժանումը կողմերի միջև կամ որոշակի մեխանիզմի վերաբերյալ համաձայնության ձեռքբերումը, որը հնարավորություն կտա կառավարել ռիսկերը:

4) Ռիսկերի չեզոքացմանը, նվազեցմանն ուղղված համապատասխան գործողություններ:

5) Ռիսկերի մոնիտորինգ, նույնականացումը կամ նոր առաջացած ռիսկերի վերահսկումը նախագծի իրականացման ողջ ժամանակահատվածում»:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-113-Ն, ՀՀՊՏ 2019.07.24./47 (1500) Հոդ. 621, Ընդունվել է՝ 28.06.2019:
2. **EUROPEAN PPP EXPERTISE CENTRE**, Market Update Review of the European PPP. Market in 2018:
3. **Manual on Government Deficit and Debt** – Implementation of ESA 2010:
4. **Marta Marsilio, M., Cappellaro, G and Cuccurullo, C.** (2011), The Intellectual Structure Of Research Into PPPs, Public Management Review, Vol 13 (6):
5. **New decision of Eurostat on deficit and debt** – Treatment of public-private partnerships. 11 February, 2004:
6. <https://www.courant.com/business/hc-news-uconn-health-partnership-search-20181019-story.html> (26.07.2021):
7. <https://www.e-draft.am/projects/767/about> (01.06.2021):
8. <https://www.fontanka.ru/2018/09/17/095/> (16.07.2021):
9. https://www.researchgate.net/publication/237337573_Financing_Infrastructure_in_the_21st_Century_The_Long_Term_Impact_of_Public_Private_Partnerships_in_Britain_and_Australia (20.07.2021):

Տճանա/Հանձնվել է՝ 12.11.2021
 Рецензирована/Գրախոսվել է՝ 19.11.2021
 Принята/Ընդունվել է՝ 26.11.2021